ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 17 » մայիս 2021թ. N 59 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի թիվ 76-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ղեկավարի հետ իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներով ստեղծված և Հայաստանի Հանրապետության Զառիթափ համայնքի Զառիթափ, Խնձորուտ, Բարձրունի, Սերս բնակավայրերին նվիրաբերվող խաղահրապարակների հանձնման-ընդունման աշխատանքները:
2. Ստեղծել հանձնման-ընդունման աշխատանքները կատարող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
3. Քաղաքաշինության վարչությանը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել խաղահրապարակների հանձնման-ընդունման աշխատանքները:
4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի քաղաքաշինության վարչությանը:

5/17/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ. մայիսի 17-ի թիվ 59-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով ստեղծված գույքը նվիրաբերելու հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպող հանձնաժողովի անհատական կազմը

Հանձնող

1. Ռուբիկ Մինասյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ),
2. Աշոտ Մինասյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար),
3. Հասմիկ Ավետիսյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ),

Ընդունող

4. Շմավոն Ազատյան – ՀՀ Վայոց ձորի մարզի Ջառիթափի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (հանձնաժողովի անդամ),
5. Ադամ Ավագյան – ՀՀ Վայոց ձորի մարզի Ջառիթափի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (հանձնաժողովի անդամ),
6. Արսեն Գևորգյան – ՀՀ Վայոց ձորի մարզի Ջառիթափի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (հանձնաժողովի անդամ):